Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 26 -ի N 704 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ ՏԱԼՈՒ

1. Օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձը (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ) օրգանական գյուղատնտեսության ոլորտում արտադրության մեթոդի և օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ ստանալու նպատակով սերտիֆիկացման մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն ձևի, որում պարտադիր նշվում են՝

1) իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անվանումը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրի պատճենը, հաշվառման և բնակության վայրերը (եթե տարբեր են) և գործունեության իրականացման վայրը.

2) իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրության և պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենները, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճենը, իսկ գյուղացիական արտադրանք արտադրելու նպատակով համատեղ գործունեության պայմանագիր կնքած ֆիզիկական անձանց դեպքում՝ պայմանագրի պատճենը.

3) օրգանական գյուղատնտեսական գործունեության վարման տարածքի (հողատարածք, պահեստ, արտադրամաս և այլն) սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքները հավաստող փաստաթղթերի պատճենները.

4) առկա բուսատեսակների, կենդանիների և մեղվափեթակների քանակությունը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 451-Ն որոշմամբ հաստատված անվանացանկում (այսուհետ՝ թույլատրելի նյութերի ցանկ) չընդգրկված նյութերի վերջին անգամ օգտագործման տարեթիվը։

2. Սերտիֆիկացման մարմինը երկօրյա ժամկետում քննության է առնում ներկայացված փաստաթղթերը և դրական եզրակացության դեպքում՝

1) տնտեսավարող սուբյեկտին գրանցում է օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների գրանցամատյանում և տալիս օրգանական գյուղատնտեսության ոլորտի արտադրության մեթոդի համապատասխանության սերտիֆիկատ, որը վկայում է, որ, գործելով տվյալ ոլորտում, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող արտադրության մեթոդը համապատասխանում է «Օրգանական գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին։ Սերտիֆիկատում պարտադիր նշվում են՝

ա. սերտիֆիկատի համարը,

բ. արտադրողի անունը, ազգանունը (անվանումը) և հաշվառման կամ գտնվելու վայրը,

գ. գործունեության ոլորտը (բուսաբուծություն, անասնապահություն, վերամշակում, մեղվաբուծություն),

դ. գործելով տվյալ ոլորտում՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող արտադրության մեթոդի համապատասխանությունը «Օրգանական գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին,

ե. սերտիֆիկացման մարմնի անվանումը, գտնվելու կամ գործունեության իրականացման վայրը, հավատարմագրման վկայականի համարը,

զ. սերտիֆիկացման մարմնի տնօրենի ստորագրությունը և կնիքը,

է. սերտիֆիկացման մարմնի նույնականացման նշագիրը, եթե այն առկա է,

ը. սերտիֆիկատի գործողության ժամկետը.

2) տնտեսավարող սուբյեկտի հետ կնքում է «Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ տալու մասին» պայմանագիր, եթե տնտեսավարող սուբյեկտը ծավալում է օրգանական գյուղատնտեսության օրենսդրությանը համապատասխան գործունեություն։

3. Եթե տարվա ընթացքում բոլոր աշխատանքները կատարվել են օրգանական գյուղատնտեսության մասին օրենսդրությանը համապատասխան, ապա սերտիֆիկացման մարմինը տնտեսավարող սուբյեկտին տալիս է օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ, որում պարտադիր նշվում են՝

1) սերտիֆիկատի համարը.

2) արտադրողի անունը, ազգանունը (անվանումը) և հաշվառման կամ գտնվելու վայրը.

3) գործունեության ոլորտը (բուսաբուծություն, անասնապահություն, վերամշակում, մեղվաբուծություն).

4) տվյալ տարում արտադրված արտադրանքի խմբաքանակի համարը և քանակը (քաշը).

5) արտադրանքը ճանաչվել է օրգանական, թե անցումային շրջանի օրգանական.

6) սերտիֆիկացման մարմնի անվանումը, գտնվելու կամ գործունեության իրականացման վայրը, հավատարմագրման վկայականի համարը.

7) սերտիֆիկացման մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացված դիտարկումների օրերը.

8) սերտիֆիկացման մարմնի կողմից կիրառված տեխնիկական կանոնակարգերը և ստանդարտները.

9) սերտիֆիկացման մարմնի տնօրենի ստորագրությունը և կնիքը.

10) սերտիֆիկացման մարմնի նույնականացման նշագիրը, եթե այն առկա է.

11) սերտիֆիկատի գործողության ժամկետը։

4. Սերտիֆիկացման մարմինն օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցամատյանում գրանցելու, գրանցումից հանելու, սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում՝ եռօրյա ժամկետում պաշտոնական գրությամբ տեղեկացնում է գրանցամատյանը վարող պետական կառավարման լիազոր մարմնին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Հ Ա Յ Տ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ տրամադրել օրգանական գյուղատնտեսության ոլորտում համապատասխանության սերտիֆիկատ

1. _____

(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

2. _____

(իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ գտնվելու և գործունեության իրականացման վայրերը,

_____

իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ հաշվառման և բնակության վայրը (եթե տարբեր են) և գործունեության իրականացման վայրը)

_____

_____

3. Իմ կողմից գործունեություն ծավալած տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 451-Ն որոշմամբ հաստատված անվանացանկում չընդգրկված նյութ վերջին անգամ օգտագործվել է ..... թվականին։

4. Հայտին կից ներկայացվող փաստաթղթերն են՝

1) իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրության և պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենները, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական ռեգիստրում գրանցման վկայականի և անձնագրի պատճենները, իսկ գյուղացիական արտադրանք արտադրելու նպատակով համատեղ գործունեության պայմանագիր կնքած ֆիզիկական անձանց դեպքում՝ պայմանագրի և անձնագրի պատճենները.

2) օրգանական գյուղատնտեսական գործունեության վարման տարածքի (հողատարածք, պահեստ, արտադրամաս և այլն) սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքները հավաստող փաստաթղթերի պատճենները.

3) տեղեկանք առկա բուսատեսակների, կենդանիների և մեղվափեթակների քանակությունների մասին:

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերը և դրանցում նշված տեղեկությունները ճիշտ են, որի համար ստորագրում եմ:

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Կ.Տ.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 26 -ի N 704 - Ն որոշման

Ձև

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԸ

Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության նշանը կիրառելի է միայն օրգանական եղանակով արտադրված և օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ ստացած արտադրանքի համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 26-ի N 704 - Ն որոշման

Ձև

Ս Ե Ր Տ Ի Ֆ Ի Կ Ա Տ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
N .....

Սույն սերտիֆիկատը վկայում է, որ գործելով _____

_____ ոլորտում,
(գործունեության ոլորտը)

_____
(տնտեսավարող սուբյեկտի հաշվառման կամ գտնվելու վայրը, անունը, ազգանունը (անվանումը)

կողմից 200 թ. արտադրված _____
(խմբաքանակի համարը և քանակը (քաշը)

_____
(արտադրանքի տեսակը)

ճանաչվել է _____ արտադրանք։
(օրգանական (անցումային շրջանի օրգանական)

Սերտիֆիկացման մարմնի՝
Անվանումը _____
Գտնվելու կամ
գործունեության
իրականացման վայրը _____

հավատարմագրման վկայականի համարը _____
Տարվա ընթացքում կատարվել է _____ դիտարկում

_____
(դիտարկումների օրերը)

_____

_____
(նշումներ սերտիֆիկացման մարմնի կողմից կիրառված տեխնիկական կանոնակարգերի կամ ստանդարտների մասին)

Սերտիֆի-
կացնող
մարմնի
լոգոն

Տնօրեն _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

09_0704

Տրված է … ……. 200 թ.

Ուժի մեջ է մինչև …. ……....200 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 26 -ի N 704 - Ն որոշման

Ձև

Ս Ե Ր Տ Ի Ֆ Ի Կ Ա Տ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
N .....

Սույն սերտիֆիկատը վկայում է, որ գործելով _____

_____ ոլորտում,
(գործունեության ոլորտը)

_____
(տնտեսավարող սուբյեկտի հաշվառման կամ գտնվելու վայրը, անունը, ազգանունը (անվանումը)

կողմից իրականացվող արտադրության մեթոդը համապատասխանում է «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Սերտիֆիկացման մարմնի՝
Անվանումը _____
Գտնվելու կամ
գործունեության
իրականացման վայրը _____

հավատարմագրման վկայականի համարը _____

Սերտիֆի-
կացնող
մարմնի
լոգոն

Տնօրեն _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

09_0704

Տրված է … ……. 200 թ. Ուժի մեջ է մինչև …. ……....200 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ